# Հանձնաժողովը մերժեց մեղադրանքները

**Անուշ ՍԱՄՎԵԼՅԱՆ**

Երեկ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստերի դահլիճը շիկացած կրքերի խառնարան էր հիշեցնում: Ներկա էին նախագահության բոլոր անդամները, բացի մեկից, որի գործողություններն էլ հենց պատճառ էին հանդիսացել կրքերի այդպիսի թեժացման: Այդ միակ անդամը ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրենն, ակադեմիկոս **Հանրի Ներսիսյանն** էր, ով արդեն երկու տարի է փորձում է ուշադրություն հրավիրել ակադեմիայի եւ հատկապես նրա նախագահի՝ իր կարծիքով ապօրինի գործունեության վրա: ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ **Ֆադեյ Սարգսյանի** առաջարկով ստեղծվել էր նախագահության 9 անդամներից կազմված հանձնաժողով, որը նպատակ ուներ ստուգել գրադարանի տնօրենի կողմից ներկայացված մեղադրանքների հիմնավորվածությունը եւ համապատասխան եզրակացության հանգել: Հետաքրքիր է, որ Հ. Ներսիսյանը նույնպես ընդգրկվել է հանձնաժողովում, չնայած ի սկզբանե շատերը դեմ են եղել դրան: Ինչեւէ, թեեւ ոչ այնքան հաճելի մթնոլորտում, հանձնաժողովն իր գործը կատարել է եւ, ինչպես նշվեց, *«աշխատել է շատ լավ եւ բարեխիղճ»*:

Այդ տեսակետին հաստատ համամիտ չէր Հ. Ներսիսյանը, քանի որ նա չմասնակցեց նախագահության ընդլայնված նիստին, ինչպես հաջողվեց պարզել, ի նշան բողոքի: Իսկ իր հատուկ կարծիքը հանձնաժողովին էր ներկայացրել ընդամենը երեկ առավոտյան: Բնական է, որ դրան ծանոթանալու, հետեւաբար նաեւ քննարկելու հնարավորություն հանձնաժողովի անդամները չէին կարող ունենալ, ուստի հանձնաժողովի նախագահ **Յուրի Չիլինգարյանը** ներկայացրեց միայն այն եզրակացությունը, որի տակ ստորագրել էին մյուսները:

Ակադեմիկոս Հ. Ներսիսյանի մեղադրանքները հանձնաժողովը դասակարգել էր չորս խմբի՝ կանոնադրական խախտումներ, ֆինանսական բնույթի խախտումներ, գերակա ուղղությունների եւ դրանից բխող նպատակային ծրագրերի հետ կապված հարցեր եւ, վերջապես, հարցեր, որոնք վերաբերում են ակադեմիայի որոշ կազմակերպությունների անհամապատասխանությանը ակադեմիայի ոլորտին եւ դրանց ֆինանսավորմանը:



Կանոնադրական խախտումների առումով հանձնաժողովը որոշակի փաստեր արձանագրել էր, սակայն ֆինանսական բնույթի խախտումներ չեն հայտնաբերվել: Հանձնաժողովն անհիմն է համարում նաեւ մեղադրանքների երրորդ խումբը՝ գերակա ուղղությունների հետ կապված, իսկ Հ. Ներսիսյանի նշած կազմակերպությունները՝ ստեղծված ՀՀ կառավարության կողմից, իրենց գործունեությամբ միանգամայն ներդաշնակ են համարվել ակադեմիայի գիտական ոլորտին:

Հանձնաժողովի ամփոփ տեղեկանքում նշված է. *«Ինչ վերաբերում է ընդհանրապես ակադեմիկոս Հ. Ներսիսյանի «մեղադրանքներին», գտնում ենք, որ ներկայացված մեղադրանքների հիմնավորումները հստակ չեն, չնայած այն բանին, որ հեղինակին տրամադրվեց 10 օր ժամանակ դրանց հստակեցման համար: Հանձնաժողովի աշխատանքների ընթացքում պարզվեց, որ, առավել եւ, չկար ոչ մի հիմնավորված մեղադրանք, այլ կային միայն կասկածանքներ: Նույնիսկ վերջնական տարբերակում շարադրված բոլոր կետերում, ի վերջո, ակադեմիկոս Հ. Ներսիսյանը հիմնականում պնդում է հետեւյալ միտքը. «Տվեք ինձ իմ ուզած փաստաթղթերը, եւ ես կասեմ, թե որտեղ եւ ինչ հանցանք է կատարվել: Իսկ այդ բոլոր փաստաթղթերը ակադեմիկոս Հ. Ներսիսյանին ներկայացնելու համար պետք էր իրականում նրան տրամադրել ՀՀ ԳԱԱ վերջին 13 տարիների գործունեության ամբողջ արխիվը»*:

Մեկնաբանվեց, որ Հ. Ներսիսյանի մեղադրանքների մի որոշ մասն էլ բխում է անիրազեկությունից: Ինչպես, օրինակ, ակադեմիկոսը տեղյակ չի եղել, որ ՀՀ կառավարության որոշմամբ է լուծարվել ԳԱԱ Վերստուգիչ-վերահսկիչ հանձնաժողովը, մեղադրում էր ակադեմիայի նախագահին՝ այն լուծարելու համար, իբր՝ ազատ գործելու հնարավորություն ունենալու նպատակով: Թերեւս նույն անիրազեկության պատճառով է ասել, թե նախագահության կողմից ծախսվել է ակադեմիային հատկացված գումարի առյուծի բաժինը: Մինչդեռ 12 մլն-ը 4 մլրդ-ի ամենեւին էլ առյուծի մասը չես համարի: Իսկ առանձին ինստիտուտների ջեռուցման եւ կաթսայատների կառուցման համար հատկացված 60 հազար դոլարը համարել է փոշիացած, որովհետեւ... 2 շաբաթ ինստիտուտները ջեռուցում չեն ունեցել: *«Սակայն չէ՞ որ կաթսայատները կառուցվել են, շենքերն էլ՝ ջեռուցվել: Մի՞թե դա նշանակում է փոշիացնել»*,-հարց է տալիս ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար **Էդուարդ Ղազարյանը**:

ԳԱԱ պրեզիդենտին հատկապես զայրացրել էր ակադեմիային պատկանող շենքերի վաճառքի մասին Հ. Ներսիսյանի բողոքը:

*«Պատասխանատու կերպով հայտարարում եմ. ոչ մի շենք չենք վաճառել»*,-ասաց նա: Ի դեպ, պարզաբանվեց, որ ակադեմիայի անշարժ գույքը ամենեւին էլ նրա սեփականությունը չէ, այլ պատկանում է ՀՀ կառավարությանը:

Հանձնաժողովն ինքը հակված չէ այն մտայնությանը, թե ոչ մի թերություն չկա կամ ոչ մի մեղադրանք ընդունելի չէ: Ավելին, նախագահության ընդունած որոշման երկրորդ կետով հանձնարարվում էր ԳԱԱ-ին եւ նրա համապատասխան ստորաբաժանումներին՝ կարճ ժամկետում քննարկել եւ համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ, անշուշտ, առաջին կետով բարձր գնահատելով հանձնաժողովի աշխատանքը: Քվեարկության արդյունքում, ձայների գերակշռող մեծամասնությամբ, որոշվեց հավանություն տալ հանձնաժողովի եզրակացությանը:

Նիստի ընթացքում եղան, անշուշտ, բավականին կրքոտ ու զգացմունքային ելույթներ: Ինքը՝ Ֆադեյ Տաճատիչը, ծայրահեղ քայլերի կողմնակից չէ: Նա առաջարկեց ակադեմիան իրավաբանական վարչություն չդարձնել: Ինքն է Հ. Ներսիսյանին նշանակել այդ պաշտոնում եւ չի ափսոսում դրա համար: Իսկ հեռացնելու որեւէ հիմք չի տեսնում: *«Ես ամբողջ կյանքում զինվորական եմ եղել, աշխատել եմ կարգ ու կանոնով եւ այդպես էլ շարունակելու եմ աշխատել»*,-հայտարարեց ԳԱԱ պրեզիդենտը: